Ե. Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1906—1907 ԹԹ.

1905 թ. ժողովրդական հեղափոխության վիթխարի ալիքը խարխլեց ցարական բյուրոկրատական կարգերի հիմքերը։ Ցարիզմը մոբիլիզացրեց բոլոր ռեակցիոն ուժերին՝ հեղափոխությունը ճնշելու համար։ Սակայն հեղափոխությունը միանգամից ճնշել նրան չհաջողվեց։ Պաշտոնական տվյալների համաձայն, եթե գործադուլավորների թիվը 1905 թ. հասել էր 2.863.173-ի, ապա 1906 թ. այն կազմեց 1.108.406 մարդ, 1907 թ.՝ 740.074[1]։ Գործադուլային շարժման այս դինամիկան ցույց է տալիս, որ թեև՝ այն գնալով նվազում էր, սակայն պայքարը դեռևս շարունակվում էր։

Ինչպես բանվորական, այնպես էլ աշակերտական շարժումները կանխելու համար ցարական կառավարությունը ուժեղացնում էր ճնշումն ու կարճատև բանտարկությունները։ Այսպես, 1905—1906 ուսումնական տարում պատժի են ենթարկվում Իգդիրում և Նոր Բայազետում՝ 12,2, Կարսի արհեստագործական ուսումնարանում սովորողների՝ 37,9 տոկոսը և այլն[2]։

Լուսավորության մինիստրությունը շրջաբերականներ էր ուղարկում բոլոր ուսումնական հոգաբարձություններին, ուր նշվում էր, աշակերտական հուզումների պատճառով միջնակարգ դպրոցների պարապմունքների անընդմեջ դադարի մասին։ Առաջարկվում է դպրոցների դիրեկտորներին՝ խստագույն միջոցներ գործադրել դրա դեմ, իսկ այն աշակերտները, որոնք չէին ենթարկվի սահմանված կարգ ու կանոնին կամ բաց կթողնեին դասերը, թույլ չտալ ավարտական ու փոխադրական քննություններին մասնակցել։ Բացի դրանից, ըստ շրջաբերականի, միջնակարգ դպրոցների վարչությունները պարտավոր էին՝ սկսած 1906 թ. մարտի 1-ից, յուրաքանչյուր ամիս շրջանային հոգաբարձությանը ներկայացնել բարձր դասարանի աշակերտների ցուցակները (սկսած 5-րդ դասարանից) հիշեցնելով նրանց բաց թողած դասերը[3]։

Այն գիմնազիաներում ու ռեալական ուսումնարաններում, որտեղ դպրոցի դիրեկտորներն անկարող էին աշակերտական շարժումները ճնշել, առաջարկվում էր անհապաղ հրաժարական տալ, որպեսզի նրանց փոխարեն ավելի «գործնական» մարդիկ նշանակվեին[4]։

Չնայած հեղափոխության դեմ ցարական կառավարության ձեռնարկած բոլոր միջոցառումներին, այնուամենայնիվ սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները կարողանում էին աշխատավորական զանգվածներին իրենց ետևից տանել։ Այսպես, ՌՍԴԲԿ Երևանի և Ալեքսանդրապոլի կազմակերպությունները 1906 թ. մայիսի 1-ի տոնակատարությունն անցկացնելու համար ապրիլի 30-ին թռուցիկներ բաց թողեցին, ուր բացատրվում էր մայիսի 1-ի տոնակատարության նշանակության մասին և կոչ էր արվում ժողովրդական բոլոր խավերին՝ դուրս գալ տոնակատարության։ Սակայն տեղական իշխանությունները տոնակատարությունից դեռ մի շաբաթ առաջ, ժողովրդական ցույցերի առաջն առնելու համար, ամենուրեք խստացրել էին հսկողությունը։ Հատկապես Ալեքսանդրապոլում «կարգ ու կանոնը» իրենց ձեռքում էին պահում հետևակ ու հեծյալ դրագունյան գորամասերը։ Սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը իշխանությունների ուշադրությունը շեղելու համար մայիսմեկյան տոնակատարությունը կազմակերպեց աշակերտների միջոցով։ Տեղական դպրոցների աշակերտները դիմեցին իրենց ուսուցիչներին, որպեսզի գուրս գան դաշտ և միասին անցկացնեն մայիսի 1-ը։ Առաջադիմական հայացքների տեր ուսուցիչները գիտենալով հանդերձ քաղաքի զինվորական դրության մասին, ընդառաջեցին աշակերտների խնդրանքին և միասին գնացին դաշտ։ Սակայն աշխատավորների խաղաղ ցույցը երկար չտևեց, շուտով վրա հասան զինվորականներն ու ստրաժնիկները և ցույցը ցրեցին[5]։

---

[1] «Статистика стачек рабочих на фабриках и заводах за трехлетие 1906—1908 гг.», составил В. Е. Варзер. С. Петербург. 1910 г., стр. 3.

[2] «Տարազ», 1905, № 13։

[3] «Մշակ», 1906, № 152։

[4] Նույն տեղում, № 43։

[5] ՍՄԿԿ ԿԿ-ին կից Մարքսի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 12, գ. 58, թ. 1—5։

Այս դպրոցների աշակերտներն իրենց դժգոհությունն արտահայտելով տիրող կարգ ու կանոնի, ծայրահեղ ռեակցիոն ու չինովնիկական վերաբերմունք ունեցող մի շարք ուսուցիչների և առաջադիմական հայացք ունեցող ուսուցիչներին դպրոցից հեռացնելու դեմ, դասադուլ են հայտարարում[6]։

1906 թ. հայկական ուսումնական հաստատություններից առաջինը բողոքի ձայն բարձրացրին Գևորգյան ճեմարանի ուսանողներն ու աշակերտները։ Նրանք հունվարի 11-ին մի գրությամբ դիմեցին ճեմարանի վարչությանը և նորանոր պահանջներ առաջադրեցին։ Բայց ճեմարանի ղեկավարությունը, խրախուսված ռեակցիայի ուժեղացումից, ոչ միայն չունկնդրեց սովորող երիտասարդության արդարացի բողոքի ձայնին, այլև արհամարհեց նրանց։ Ի պատասխան աշակերտների պահանջների, ճեմարանի տեսուչ Գարեգին վարդապետը ասում է. «Լավ կլինի լսեք և զոհ լինեք նրանով, ինչով բարեհաճում են իրրև ողորմություն ձրիաբար բաշխելու, ապա թե ոչ բոլորին էլ կվռնդենք և այն ժամանակ թեև կղջաք, բայց ուշ կլինի։ Կարծում եք հասարակությունը կբողոքի՞, ո՞չ, հասարակությունը ժամանակ չունի, ձեզնով չի հետաքրքրվում, գուցե և ձեզ՝ ձրիակերներիդ մեղադրի»[7]։ Իսկ հասարակական զայրույթը մեղմացնելու համար Գարեգին վարդապետը հանդես է գալիս մամուլում ի պաշտպանություն դպրոցական ծրագրերի փոփոխության։ Նա հայտարարում է, որ հանձնաժողով է նշանակել, որն ամենայն լրջությամբ զբաղվում է «ճեմարանի իսկական կարիքների քննությամբ» և հաշվի է առնում աշակերտների պահանջները[8]։

Ըստ էության, տեսուչի կողմից սա մի դեմագոգիկ հայտարարություն էր, որի նպատակն էր՝ պահպանել ճեմարանում գոյություն ունեցող ներքին կարգ ու կանոնը և տեղում խեղդել աշակերտների ամեն մի առաջադիմական քայլը։ Իրոք, շատ ժամանակ չէր անցել տեսուչի խոստումից հետո, երբ ճեմարանի մանկավարժական խորհրդի մարտի 15-ի որոշմամբ, ճեմարանի 5-րդ դասարանից հեռացվեց Թիֆլիսի լրագրերի թղթակից Սեմյոն Տեր-Մինասյանը այն բանի համար, որ նա հանդգնել էր իր հոդվածներում վեր հանել ճեմարանի արատավոր կողմերը[9]։

Ինչպես երևում է արխիվային փաստաթղթերից և մամուլի տվյալներից, 1905 թ. հեղափոխության և դրան նախորդող շրջանում ճեմարանի վարչությունը չէր հանդգնել որևէ աշակերտի կամ ուսանողի ճեմարանից հեռացնել լրագրերին թղթակցելու համար։ Պետք է ասել, որ այդ ժամանակաշրջանի հայ մամուլը լի էր ճեմարանը և ընդհանրապես դպրոցական կյանքը քննադատող հոդվածներով։

Ճեմարանի վարչության այս աննախադեպ գործողությունը գրգռում է աշակերտներին, որոնք մարտի 21-ին դասադուլ են անում։

Աշակերտների այս վարմունքի մասին ճեմարանի տեսուչ Գարեգին վարդապետը հայտնում է կաթողիկոսին։ Վերջինիս հրամանով ճեմարանում դադարեցվում են դասերը և ուսումնական տարին վերջացած է համարվում։ Աշակերտների գրավոր դիմումները՝ իրենց ժամանակից շուտ չպատճառաբանված արձակելու մասին, թե՛ ճեմարանի վարչության և թե՛ կաթողիկոսի կողմից ուշադրության չեն առնվում[10]։

1906 թ. փետրվարին դասադուլ են անում Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի աշակերտները։ Դեռ 1905 թ. դեկտեմբերին սկսված Երևանի թեմական դպրոցի և Էջմիածնի Գևորգյան ճեմարանի աշակերտների դասադուլները լայն արձագանք գտան Թիֆլիսի Ներսիսյան հոգևոր դպրոցի աշակերտության մեջ։ Դասադուլավորները պահանջ դրեցին դպրոցի ղեկավարության առաջ՝ մինչև առաջիկա սեպտեմբեր ամիսը, ըստ իրենց ուղղումների, վերափոխել դպրոցի ծրագիրը[11]։ Բացի դրանից, աշակերտները ստորագրություններ հավաքեցին և ներկայացրին դպրոցի վարչությանը՝ իրենց ատելի մի ուսուցչի աշխատանքից հեռացնելու համար[12]։ Աշակերտների հարկադրանքի տակ Վրաստանի և Իմերեթիայի հայոց թեմի առաջնորդը ստիպված հանձն առավ մինչև 1906 թ. սեպտեմբերի 1-ը՝ ծրագրի մեջ բարեփոխություններ կատարել։ Այդ կապակցությամբ նա մի գրությամբ խնդրեց հայոց կաթողիկոսին իրեն օգնել այդ գործը շուտափույթ կերպով կարգադրելու համար[13]։

---

6 «Революционное движение в Армении 1905—1907 гг.», стр. 321

7 «Մշակ», 1906, № 29։

8 Նույն տեղում, № 38։

9 Նույն տեղում, № 66 (Հայկական ՍՍՀ ՊԿԱ, ֆ. 212, թղթ. 27, վավ. 128)։

10 Հայկական ՍՍՀ ՊԿԱ, ֆ. 56, ց. 3, գ. 490, թ. 13—14։

11 Նույն տեղում, գ. 481, թ. 12։

12 «Մշակ», 1906, № 65։

13 Հայկական ՍՍՀ ՊԿԱ, ֆ. 56, ց. 3, գ. 851, թ. 12։

1906 թ. փետրվարին դասադուլ են անում նաև Բաքվի միջնակարգ դպրոցի աշակերտները։ Չնայած ցարական ինքնակալությունը հրահրում էր հայ-ադրբեջանական եղբայրասպան կոտորածներ, այնուամենայնիվ այդ երկու ժողովուրդները, բոլշևիկյան կուսակցության բացատրական աշխատանքի շնորհիվ, հասկանալով ցարիզմի քաղաքականության բուն իմաստը, համախմբվում են։ 1905 թ. փետրվարյան հայ-ադրբեջանական կոտորածների տարեդարձի առթիվ, որպես եղբայրական դաշինքի և ցարիզմի դեմ խռովահույզ բողոքի արտահայտություն, Բաքվի միջնակարգ դպրոցի աշակերտները, ի նշան սգի, երեք օրով՝ 1906 թ. փետրվարի 8—10-ը ընդհատում են պարապմունքները։ Բացի դրանից, տասը հայ և ադրբեջանցի աշակերտներ, որպես պատգամավորներ, ուղարկվում են Գանձակ (Կիրովաբադ) տեղի գիմնազիայի աշակերտների մեջ պրոպագանդա մղելու՝ կասեցնելու համար ցարական գործակալների կողմից գիմնազիայի հայ և ադրբեջանցի աշակերտների պառակտումը[14]։

Բոլշևիկների եռանդուն աշխատանքի շնորհիվ բարձրանում է աշակերտների հեղափոխական ոգին։ Նրանք առանց արձագանքի չեն թողնում ոչ մի հեղափոխական իրադարձություն կամ ցարական կառավարության կողմից սոցիալ-դեմոկրատների նկատմամբ գործադրվող ոչ մի հաշվեհարդար։ Այս կապակցությամբ Կովկասի ոստիկանության պետը ներքին գործերի մինիստրին տեղեկացնում է, որ մարտի 20-ին Երևանի արական գիմնազիայի բարձր դասարանի աշակերտները, որպես բողոքի արտահայտություն, ցարական կառավարության կողմից սևծովյան նավատորմի լեյտենանտ, հեղափոխական-դեմոկրատ Շմիդտի գնդակահարության, մեկ օրով դասադուլ են հայտարարել[15]։ Դասադուլն անց է կացվում Երևանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության կողմից։ Դասադուլի ժամանակ աշակերտներից առանձնապես աչքի են ընկնում Մոգնեշտեյնը, Տիգրան Մուշեղյանը, Հովհաննես Զաքարյանը, Գ. Տեր-Գրիգորյանը, Ա. Ալանիկյանը, Ամիրխանյան եղբայրները և ուրիշներ[16]։ Դասադուլի կազմակերպիչները հեկտոգրաֆի վրա թռուցիկներ են բազմացնում և սոցիալ-դեմոկրատական խմբակի անդամների միջոցով ցրում աշակերտների մեջ, փակցնում դպրոցի պատերին ու մի քանի կենտրոնական փողոցներում։ Նույնիսկ մի թռուցիկ էլ գցում են դպրոցի տեսուչ Բոգոլյուբսկու բնակարանի փոստարկղը։ Թռուցիկը ագիտացիոն կոչ էր, որտեղ բողոքելով հեղափոխականների նկատմամբ ցարիզմի կատարած վայրագությունների դեմ, դատապարտում էին լեյտենանտ Շմիդտի սպանության ակտը և վերջացնում «Կորչի ցարիզմը», «Կեցցե հեղափոխությունը» լոզունգներով[17]։ Գիմնազիայի սոցիալ-դեմոկրատ աշակերտները այդ թռուցիկի բովանդակությանը համանման մի կոչով դիմում են Ս. Հոիփսիմեի իգական գիմնազիայի աշակերտուհիներին։ Կոչի մեջ ասված էր. «Ինքնակալությունը և նրա չինովնիկական հորդան մոտ օրերս գնդակահարեցին քաջարի Շմիդտին և չորս նավաստիների։ Ցարի և նրա դահիճների այդ հանդուգն արարքի լուրն արագորեն տարածվելով, մինչև հոգու խորքը հուզեց ամբողջ Ռուսաստանին։ Այդ հուզումները շատ վայրերում դրսևորվեցին աշակերտների գործագուլների և ցույցերի ձևով։ Բողոքենք և մենք, ընկերներ, ընդդեմ ստոր բյուրոկրատների այդպիսի նողկալի արարքի, հրաժարվելով այսօր հաճախել պարապմունքներին»[18]։ Այս կոչը ջերմ արձագանք գտավ իգական գիմնազիայի աշակերտուհիների շրջանում, որոնք հրաժարվեցին պարապմունքներից։

1906 թ. դասադուլներից առանձնապես ուշադրության արժանի է Ղարաբաղի (Շուշու) թեմական դպրոցի աշակերտների դասադուլը, որը հսկայական ազդեցություն ունեցավ աշակերտական հետագա շարժումների վրա[19]։

Դասադուլային ուժեղ ալեկոծությամբ է սկսվում 1906—1907 ուսումնական տարին։ 1906 թ. հոկտեմբերին իշխանությունների կողմից Երևանի Ս. Հոիփսիմեի իգական գիմնազիայի առաջադեմ ուսուցիչներից մեկի՝ Պոտլավսկայայի դպրոցից հեռացումը, որը մեղադրվում էր աշակերտների շրջանում հակակառավարական պրոպագանդա անելու մեջ[20], մեծ դժգոհություն առաջացրեց։ Հոկտեմբերի 11-ին աշակերտուհիները դասադուլ արեցին և հրաժարվեցին գիմնազիա հաճախե-

---

14 «Մշակ», 1906, № 30։

15 Վրացական ՍՍՀ ՊԿԱ, ֆ. 1, գ. 207, թ. 47—48։

16 Վ. Աստվածատրյան, Աշակերտական հեղափոխական շարժման էջերից, «Սովետական մանկավարժ» 1963, № 3։

17 Հ. Դան, Սպարտակի ակունքները («Ավանգարդ», 1929 թ., № 22)։

18 «Революционное движение в Армении 1905—1907 гг.», стр. 320.

19 Մանրամասն տե՛ս Ե. Ս. Սահակյանի «Աշակերտական շարժումները Ղարաբաղի թեմական դպրոցում 1906 թ.», ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1965 թ., № 12։

20 Վրացական ՍՍՀ ՊԿԱ, ֆ. 422, ց. 1, գ. 17151, թ. 182։

յուց այնքան ժամանակ, մինչև որ չվերականգնվի հեռացված ուսուցչուհին։ Դասադուլի մասին իմանում է Երևանի նահանգապետը։ Վերջինս իր մոտ է կանչում գիմնազիայի դիրեկտորին՝ զգուշացնում, որ եթե դասադուլներն ու ցույցերը շարունակվեն, ապա ամբողջ պատասխանատվությունը կընկնի նրա վրա։ Նահանգապետը կարգադրում է շուտափույթ ճնշել հուզումները և պարապմունքները դնել նորմալ ընթացքի մեջ։ Աշակերտների «խաղաղեցման» գործին խառնվում է նաև ոստիկանությունը։ Ոստիկանական օրգանների միջոցով պարզվում է, որ արական գիմնազիայի աշակերտ Տիգրան Մուշեղյանի[21] ղեկավարությամբ գործում է մի աշակերտական «ինքնազարգացման» խմբակ, որի մեջ ընդգրկված էին Երևանի գիմնազիաների 2-րդ, 3-րդ, 4-րդ դասարանների աշակերտ-աշակերտուհիներից Թամարա Տեր-Մարտիրոսյանը, Աննա Ամբակումյանը, Սոնյա Գրիգորյանը, Ալեկո Օհանյանը, Առաքել Մուշեղյանը և ուրիշներ։ Խմբակը ինքնազարգացման անվան տակ ուսումնասիրում էր մարքսիստական գրականություն։ Պարզվում է նաև աշակերտական հուզումների հիմնական կազմակերպիչների անունները[22], դրանք են՝ Սոկոլովսկին, նրա քույրը՝ Խրիստինան, 6—7-րդ դասարանների աշակերտուհիներ Տեր-Մարտիրոսյանցը, Պարզյանցը, Ջելինսկայան և ուրիշներ։ Ցարիզմի գործակալները Սոկոլովսկուն սպառնում են աքսորով՝ եթե նա «անմիջապես չդադարեցնի աշակերտների մեջ տարվող ագիտացիան»[23]։ Սակայն ցարական իշխանությունների այդ սպառնալիքները չվախեցրին աշակերտներին։

Գիմնազիայի աշակերտների ելույթն արձագանք գտավ ամբողջ Երևանի սովորող երիտասարդության մեջ։ «Ինչպես պետք էր սպասել,—կարդում ենք Կովկասի փոխարքայի փաստաթղթերում,—Երևանի Ս. Հռիփսիմեի գիմնազիայի աշակերտուհիների մեջ առաջացած խռովությունը չհապաղեց անդրադառնալու հիշյալ քաղաքում սովորողների ընդհանուր տրամադրության վրա»[24]։

Սբ. Հռիփսիմեի իգական գիմնազիայի աշակերտուհիների դասադուլը դեռ ընթացքի մեջ էր, երբ սկսվեցին արական գիմնազիայի աշակերտների հուզումները։

1906 թ. հոկտեմբերի 15-ին գիմնազիայի բարձր դասարանի աշակերտները ժողովվեցին հավաքույթի, որտեղ ընտրեցին 6 հոգուց բաղկացած պատգամավորների կազմ։ Պատգամավորները ներկայացան մանկավարժական խորհրդի նիստին և պահանջեցին աշակերտության պատգամավորներին թույլ տալ վճռական ձայնի իրավունքով մասնակցելու մանկավարժական խորհրդի նիստերին[25]։

Աշակերտական հավաքույթի մասնակիցները երգում էին հեղափոխական երգեր՝ «Մարսելյոզ», «Փառք ազատության մարտիկին»[26]։ Նրանք արտասանում էին հեղափոխական բնույթի ճառեր, ուր նզովում էին ցարական բյուրոկրատիային ու կոչ անում աշակերտությանը՝ ելնել հեղափոխական պայքարի։ «Մենք պետք է դասադուլ անենք,—ասում էին նրանք,—որպեսզի դրանով մեր բողոքն արտահայտենք կառավարության կամայականության դեմ, և մեր ծնողներին ստիպենք մասնակցելու ազատագրական շարժմանը։ Մենք, որպես հեղափոխականներ, միշտ պետք է պատրաստ լինենք միանալու ակտիվ հեղափոխական ելույթներին»[27]։

Նոյեմբերի 6-ին աշակերտները և ծնողական խումբը Կովկասի ուսումնական օկրուգի հոգաբարձուից պահանջում են աշակերտների նկատմամբ ունեցած բյուրոկրատական վերաբերմունքի համար գիմնազիայից հեռացնել դիրեկտոր Ռոգոլյուբսկուն և գիմնազիայի ներքին կյանքում բարեփոխություններ մտցնել[28], աշխատանքի վերականգնել ուսումնական օկրուգի հոգաբարձության կողմից հեռացված մի առաջադեմ ուսուցչի, և վերացնել ռազմադաշտային դատարանը[29]։ Աշակերտները գիմնազիայում տարածում էին նաև թռուցիկներ, որոնցում մերկաց-

---

21 Տիգրան Մուշեղյանը 1906 թ. գիմնազիայի բարձր դասարանի աշակերտ էր, հետագայում դարձավ կոմունիստ։ Խորհրդային կարգերի հաստատումից հետո երկար տարիներ աշխատել է լուսավորության բնագավառում, եղել է լուսավորության ժողկոմի տեղակալ, Երևանի պետական համալսարանի ռեկտոր։ Վախճանվել է 1936 թ.։

22 Վ. Աստվածատրյան, Աշակերտական հեղափոխական շարժման էջերից, «Սովետական Հայաստան», 1963, № 3։

23 Վրացական ՍՍՀ ՊԿԱ, ֆ. 2, գ. 8, թ. 54։

24 Նույն տեղում։

25 Նույն տեղում։

26 Նույն տեղում։

27 Նույն տեղում։

28 Նույն տեղում, ֆ. 422, ց. 1, գ. 9087, թ. 32։

29 Նույն տեղում։

վում էին ցարական կառավարության ռեակցիոն քաղաքականությունը և դպրոցական վայրագ կարգերը։ Այս բոլորի հետևանքով գիմնազիայում ստեղծվում է լարված դրություն և պարապմունքները ժամանակավորապես դադարում են[30]։

Նոյեմբերի 9-ին դասադուլ էն անում Ալեքսանդրապոլի առևտրական ուսումնարանի աշակերտները[31]։

Աշակերտական այս բոլոր շարժումներն անց են կացվում սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների անմիջական ղեկավարությամբ։

1906 թ. վերջին ամիսներին հուզումները չէին դադարում և հայկական ուսումնական հաստատություններում։ Աշակերտները յուրաքանչյուր հարմար առիթ օգտագործում էին դպրոցում տիրող մղձավանջային կարգերը մերկացնելու համար։ Այսպես, Նոր Նախիջևանի թեմական դպրոցում 1906 թ. նոյեմբերի 6-ին մահանում է դպրոցի աշակերտներից մեկը։ Մահացածի դագաղի առաջ, ընկերների հանձնարարությամբ, դանբանական է ասում աշակերտներից մեկը (Գալուստ Գողոսյանը), որն առիթն օգտագործելով վեր է հանում դպրոցում տիրող փտած կարգերի էությունը[32]։ Հետևանքը լինում է այն, որ այդ աշակերտին հեռացնում են դպրոցից իբրև հասարակական կարգ խանգարողի։ Աշակերտներն իրենց զայրույթը արտահայտում են դասադուլով, և 43 աշակերտի ստորագրությամբ 1906 թ. նոյեմբերի 24-ին գրավոր բողոք են ներկայացնում։ Նրանք պահանջում են անհապաղ վերականգնել հեռացված աշակերտի իրավունքները[33]։

Դպրոցի տեսուչ Մուշեղ վարդապետը, ուշադրություն չդարձնելով աշակերտների բողոքին, նոյեմբերի 22-ից փակում է դպրոցի 4-րդ և 6-րդ դասարանները, իսկ 28 աշակերտի հեռացնում դպրոցից[34]։ Դասադուլի և 28 աշակերտների հեռացնելու լուրը մեծ արագությամբ տարածվում է հայկական դպրոցներում և իր ազդեցությունը թողնում աշակերտական հուզումների վրա։ Այս կապակցությամբ Երևանի թեմական դպրոցի հոգաբարձության հեռագրում կարդում ենք. Երևանի թեմական դպրոցի հոգաբարձությունը, խորապես ցավելով Նոր Նախիջևանի թեմական դպրոցում տեղի ունեցած դեպքի վրա, որը չափազանց անհանգստություն և աղմուկ առաջացրեց մեր աշակերտների մեջ, համոզելով խնդրում ենք շուտափույթ և ամեն տեսակ խաղաղ ջանք գործ դնեք վերացնելու կրթական գործին խանգարող այդ խայտառակությունը»[35]։ Հակառակ հոգաբարձության, Նոր Նախիջևանի հոգևոր դպրոցի աշակերտներին իրենց համերաշխությունն են հայտնում Երևանի թեմական դպրոցի աշակերտները։ Նրանք հեռագիր են ուղարկում դասադուլավորներին, ուր դատապարտում են տիրող դպրոցական կարգերը։

Ցարական գործակալներին նույնպես անհանգստություն է պատճառում աշակերտների դասադուլը, ուստի նրանք աշխատում են պաշտոնապես միջամտել գործին։ Գեներալ նահանգապետը խիստ մեղմ համարելով աշակերտների նկատմամբ կիրառված միջոցառումները, առաջարկում է իր ծառայությունը և պահանջում դպրոցից հեռացված աշակերտների ցուցակը՝ հարմար առիթ ներկայանալու դեպքում, նրանց քաղաքից արտաքսելու համար[36]։

Դասադուլը վերջացավ անհաջող, աշակերտների արդարացի պահանջը չբավարարվեց և նրանք ընկան մեծ զրկանքների մեջ։ Բայց և այնպես դասադուլը մեծ նշանակություն ունեցավ մյուս ուսումնական հաստատությունների աշակերտների հետագա պայքարի համար։

1906 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին պասսիվ բողոքներ են տեղի ունենում Գևորգյան ճեմարանում։ Աշակերտներն աստիճանաբար դադարում են եկեղեցի հաճախել, մերթընդմերթ չեն ենթարկվում ճեմարանի ներքին կարգ ու կանոնին, ուշ ժամերին ժողովներ են կազմակերպում, բայց դրանք, համեմատած 1905 թ. շարժումների հետ, առանձին որակ չեն կազմում։

1906 թ. վերջին ամիսների մեծ մասշտաբի հլույթների շարքը կարելի է դասել սոցիալ-

---

30 Նույն տեղում։

31 Отчет о состояние уч. заведении кавказского учебного округа за 1906-1907 гг., стр. 20.

32 «Մշակ», 1906, № 264։

33 Նույն տեղում, № 263։

34 Նույն տեղում, № 262։

35 «Նոր կյանք», 1906, № 24, էջ 308։

36 «Մշակ», 1906, № 277։

դեմոկրատական կազմակերպության ղեկավարությամբ տեղի ունեցած Ղարաբաղի (Շուշու) թեմական դպրոցի աշակերտական շարժումները[37]։

Հեղափոխական շարժումները սովորող երիտասարդության մեջ շարունակվեցին նաև 1907 թ.։ Ճիշտ է, դրանք աստիճանաբար ուժեղացող ռեակցիայի շրջանի շարժումներ էին, բայց անհետևանք չէին անցնում։ Սովորող երիտասարդությունը, կոփված լինելով 1905—1906 թթ. հեղափոխական մարտերում, կարողանում է տեղ-տեղ վճռական հակահարձակման անցնել խարխլվող դպրոցական սիստեմի դեմ։

Այս տեսակետից շատ բնորոշ է Էջմիածնի Գևորգյան ճեմարանի աշակերտների և ուսանողների ելույթը, որը թերևս ամենախոշորն էր 1907 թ. ընթացքում։

Այդ ելույթներն առավել համառ ու հետևողական են դառնում, երբ նրանց վրա ուժեղանում է տեղի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ազդեցությունը։

Ճեմարանը, որը տարիներ շարունակ խեղդել էր սաների ինքնուրույնությունը, սերմանել հլու հնազանդություն տիրող փտած կարգերին, ռեակցիայի ուժեղացման հետ ավելի էր ինտենսիվացնում իր գործողությունները։

Սակայն սովորող երիտասարդությունը, որն ավելի համարձակ էր դարձել 1905—1906 թթ. հեղափոխական շարժումների ժամանակ, սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ղեկավարությամբ նորանոր գրոհների է դիմում։ Այսպես, 1907 թ. հունվարի 16-ին ճեմարանում տիրող բարքերը բացահայտորեն քննադատելու համար, մանկավարժական ժողովի որոշմամբ հեռացվում են երկու աշակերտ[38]։ Անհանդուրժելի համարելով ճեմարանի ղեկավարության կատարած ակտը, աշակերտների և ուսանողների առավել առաջադիմական մասը բողոքում է մանկավարժական ժողովի որոշման և ընդհանրապես ճեմարանի վարչության ապօրինի վերաբերմունքի դեմ ու պահանջում նորից ետ ընդունել հեռացված աշակերտներին[39]։ Սակայն պետք է նշել, որ ինչպես ամենուր, այնպես էլ ճեմարանում աշակերտական շարժումը միատարր չէր։ Դաշնակներին հաջողվում է ջլատել աշակերտական շարժումը և աշակերտների մի մասին տանել իրենց ետևից, որոնք պաշտպանում էին ճեմարանի վարչության վարած քաղաքականությունը։ Աշակերտների մյուս մասը գնում էր սոցիալիստ հեղափոխականների ետևից և լոյալ դիրք էր գրավում վտարված աշակերտների ընդունման գործում։ Աշակերտների սոցիալ-դեմոկրատական խումբը, թվով 24 հոգի[40], հայտնում են ճեմարանի վարչությանը, որ իրենք համամիտ են ճեմարանից հեռացված իրենց ընկերների բոլոր ասածներին և, մանկավարժական ժողովի վճիռը համարելով անարդարացի, պահանջում են վերընդունել արձակվածներին։ Հայտարարությունը վերջանում է «Կամ մենք նրանց հետ, կամ նրանք մեզ հետ»[41] լոզունգով։ Ճեմարանի վարչությունը, հաշվի առնելով ռեակցիոն ուժերի շարքերի աստիճանական խտացումը և օգնական ունենալով բուրժուա-ազգայնական կուսակցություններին, մերժում է այդ առաջարկը։ Բողոքող աշակերտները, տեսնելով դպրոցի ղեկավարների ապիկարությունը և դաշնակցականների սպառնալիքները, որոնք զինվորների հետ վխտում էին ճեմարանի բակում և մահվան սպառնալիքներով լի անստորագիր նամակներ էին ուղարկում բողոքավորներին, հեռանում են ճեմարանից[42]։ Աշակերտները 1907 թ. հունվարի 25-ին մի խնդրագիր են գրում կաթողիկոսին, որով պահանջում են հանձնաժողով նշանակել կատարված դեպքի պատճառները մանրամասն ստուգելու համար[43]։ Նրանց խնդրանքը կատարվում է։ Կաթողիկոսի կողմից նշանակված հանձնաժողովի անդամներից մեկը՝ սինոդի անդամ Բարգեն վարդապետը կաթողիկոսին գրած իր զեկուցագրում ստուգման արդյունքները շարադրելիս ստիպված է լինում մանրամասն կանգ առնել ճեմարանի ուսումնա-դաստիարակչական այն բազմաթիվ «խոցելի» կողմերի վրա, որոնք աղբյուր են հանդիսացել ու հանդիսանում են աշակերտական շարժումների համար։ Վարդապետը խոստովանում է, որ աշակերտական հուզումները առաջին անգամը չէ, որ բռնկվում են ճեմարանում, դրանք ծնունդ են առել ճեմարանի հիմնադրման օրից և, պարբերաբար կրկնվելով, մեծ մասշտաբների են հասել։ Նա խարազանում է բարձրաստիճան հոգևորականությանը և ճեմարանի վարչությանը,

---

37 Ե. Ս. Սահակյան, Աշակերտական շարժումները Ղարաբաղի թեմական դպրոցում, 1906, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1965, № 12։

38 Հայկական ՍՍՀ ՊԿԱ, ֆ. 56, ց. 3, գ. 501, թ. 29—37։

39 «Մշակ», 1907, № 21։

40 Հայկական ՍՍՀ ՊԿԱ, ֆ. 56, ց. 3, գ. 501, թ. 27։

41 «Մշակ», 1907, № 21։

42 Նույն տեղում, № 22։

43 Հայկական ՍՍՀ ՊԿԱ, ֆ. 56, ց. 3, գ. 501, թ. 28։

որոնք չեն ուսումնասիրել երևան եկող հուզումների պատճառները և ըստ այնմ միջոցների դիմել՝ այդ պատճառները վերացնելու համար։

Բայց ինչպիսի «արմատական միջոցներ» էր առաջարկում Բարգեն վարդապետը։ Նա ոստիկանի հատուկ դատողությամբ առաջարկում էր արմատախիլ անել ճեմարանում եղած փոքրիշատե ազատությունը։ Ինչպես հայտնի է, 1905—1906 թթ. հեղափոխական շարժումների ազդեցության տակ որոշ փոփոխություններ կատարվեցին ճեմարանի կյանքում, կրճատվեց կրոնական առարկաների քանակը, աշակերտների եկեղեցի գնալը դարձավ սակավ, նրանք դադարեցին երգչախմբում երգելուց և այլն։ Ըստ երևույթին, այս փոփոխությունները դուր չէին եկել վարդապետին, ուստի նա առաջարկում էր աշակերտներից ետ խլել այն ամենը, ինչ նրանք կարողացել էին ձեռք բերել այդ տարիներին, քանի որ այդ փոփոխությունները, ըստ նրա, խթանիչ հանգամանք էին հանդիսացել աշակերտական շարժումների ինտենսիվացման համար։ Անդրադառնալով ճեմարանում կատարված փոփոխություններին, վարդապետը գրում է. «1906—1907 ուսումնական տարվա մեջ այդ փոփոխություններն ավելի աչքի են ընկնում, չկան կրոնի դասեր, չկան այլևս կարևոր առարկաներ, սաների կյանքը միանգամայն ազատ է համարվում, իսկ այդ ազատումը կայանում է նրանում, որ երբ էլ լինի աշակերտը կարող է ճեմարանից դուրս գտնվել, որտեղ կարենա կարող է գնալ... Հակառակ նախկին կարգերի, սույն ուսումնական տարվա սկզբից աշակերտները չեն գնում եկեղեցի... Այս բոլորից հետո Զերդ վեհափառության բարեմիտ ուշադրությունն եմ դարձնում այն վտանգավոր հուզումների վրա, որն այժմ գոյություն ունի ճեմարանում և որով վրդովված է ճեմարանական կյանքը, և եթե արմատական միջոցներ ձեռք չառնվի, կարող է տխուր վախճան ունենալ»[44]։

Ինչպես տեսնում ենք, ռեակցիան պահպանողական ուժերը աստիճանաբար կայունացնում էին իրենց դիրքերը, ցանկանալով ետ խլել այն փոքրիշատե ազատության փշրանքները, որ հեղափոխության սկզբի տարիներին նվաճել էին աշակերտները։

Կաթողիկոսը, լսելով հանձնաժողովի զեկուցումը, կոնդակով հաստատում է մանկավարժական ժողովի որոշումն՝ աշակերտների վտարման մասին և թույլատրում ինքնակամ հեռացված աշակերտներին ճեմարան վերադառնալ[45]։

Ճեմարանի ղեկավարներն հասարակական կարծիքի առաջ անգամ տեղի չէին տալիս[46]։ Լիբերալ-բուրժուական մամուլի 12 խմբագիրներ միջամտում են, որպեսզի վերանայվի հեռացված աշակերտների գործը[47], բայց այդ ևս անհետևանք է մնում։

Այսպիսով, հեղափոխության վայրէջքի շրջանում ճեմարանի ղեկավարները կարողանում են իրենց հաղթանակը տոնել աշակերտական շարժումների նկատմամբ։ Աշակերտական շարժումների պատմությունը ցույց է տալիս, որ թե՛ ճեմարանի վարչությունը և թե՛ կաթողիկոսը ոչնչով շահագրգռված չէին բավարարելու աշակերտների պահանջները։ Ճեմարանը լինելով կրոնական հաստատություն, դեմ էր ամեն մի բարեփոխության, ուստի բարեփոխություններ պահանջող աշակերտական հուզումները խեղդվում էին հենց սկզբնավորման շրջանում, իսկ երբ բռնկված հուզումները այնքան մեծ էին լինում, որ հայտնի էին դառնում հասարակական լայն շրջաններին, այն ժամանակ վարչությունն արձակում էր «ըմբոստ» աշակերտներին։ Եվ քանի որ աշակերտական շարժումները պատահական երևույթ չէին, այլ ունեին իրենց խոր արմատները, դրա համար էլ ամեն մի փոքր առկայծումից կրկին բռնկվում էին։

Բացի ճեմարանի ռեակցիոն ղեկավարներից ու սինոդի անդամներից, գլուխ էին բարձրացրել նաև այլ հաստատություններում գործող ռեակցիոն ուժերը։ Այսպես, Նոր Նախիջևանի եկեղեցական հոգաբարձությունը 1907 թ. ապրիլի 19-ին կաթողիկոսին գրած նամակում մեղադրում է Գևորգյան ճեմարանի ղեկավարներին, «հոգևոր ուղղությունը» փոխելու մեջ. «Վերջին այս տարին (ճեմարանը—Ե. Ս.) բնավ չեղվել է յուր իսկական նպատակեն և հեռացել է երջանկահիշատակ հիմնադրի նախագծած ծրագրեն,—գրում է հոգաբարձության նախագահը,—այսպես կրոնական առարկաները բարձր դասարաններու մեջ այլևս չեն ավանդվել, սեղանատանը և դասարաններու մեջ սահմանված աղոթքներ չեն արվել, նույնիսկ եկեղեցի գնալը պարտավորական չի համարվել աշակերտներու համար։ Մեկ խոսքով ստեղծված է մի այնպիսի դրություն, որ բա-

---

44 Նույն տեղում, թ. 35։

45 Նույն տեղում, թ. 38։

46 «Մշակ», 1907, № 52 (Հայկական ՍՍՀ ՊԿԱ, ֆ. 312, թ. 27։ Վավ. 183, 186, 187)։

47 Նույն տեղում, № 57։

ցի ճեմարանի բուն նպատակին հիմնովին հակառակ լինել կարող է նաև վտանգի ենթարկված լինել նույնիսկ կրթարանի գոյությունը...»[48]։

Հակառակ ռեակցիոն պահպանողական ուժերի, ուսուցչության մեջ կային այնպիսի առաջադիմական հայացքների տեր մարդիկ, որոնք դպրոցի ժողովրդականացման և աշակերտների շահը նկատի ունենալով, աշխատում էին որքան հնարավոր է հաշվի առնել աշակերտների պահանջները և ըստ այնմ վերակառուցել ուսումնադաստիարակչական աշխատանքը։ Այդ ուսուցիչներից էր անվանի գրականագետ-լեզվաբան Մանուկ Աբեղյանը։

Ճեմարանը քաոսային վիճակից հանելու և աշակերտական շարժումները կանխելու համար Էջմիածնի սինոդը Մանուկ Աբեղյանին առաջարկում է ընդունել ճեմարանի տեսչությունը։ Վերջինս համաձայնվում է ստանձնել այդ պաշտոնը, եթե միայն թույլատրվի համապատասխան բարեփոխություններ կատարել։

Մանուկ Աբեղյանը աշակերտական հուզումների բուն պատճառը համարում էր ուսումնադաստիարակչական աշխատանքի ծայրահեղ անտանելի վիճակը և ճեմարանի բյուրոկրատական ռեժիմը, ուստի այդ հուզումները կանխելու համար առաջարկում էր վերացնել հուզումներ ծնող պատճառները։ Այդ պատճառները նա համարում էր ուսումնական ծրագրի անպետքությունը, որակյալ ուսուցիչների պակասությունը, կրոնական համազգեստներ կրելը (ֆես և հոգևորական վերարկու), եկեղեցի գնալը, աղոթք անելը և այլն[49]։

Մ. Աբեղյանի առաջարկած պայմաններից ընդունվում են միայն երկուսը։ Սինոդը հանձն է առնում ճեմարանն ապահովել բարձրագույն կրթություն ունեցող մասնագետ ուսուցիչներով և սաների հոգևորական հագուստը փոխարինել աշխարհականով, իսկ մյուս պահանջները չեն ընդունվում, ուստի և Մ. Աբեղյանը հրաժարվում է տեսչությունն ստանձնելուց։

Հոգևորականությունն այսպես էր ղեկավարում ժողովրդական լուսավորության գործը։ Նա օգտագործում էր իր համար նպաստավոր ամեն պայման՝ հանդես եկող առաջադիմական ձգտումները սաղմի մեջ խեղդելու համար, և պատահական չէ, որ բոլշևիկներն իրենց պայքարն ուղղում էին նաև հոգևորականության դեմ։

1907 թ. հունվարյան հուզումներից հետո Հայաստանի և Անդրկովկասի հայաշատ վայրերի ուսումնական հաստատություններում այլևս խոշոր ելույթներ տեղի չունեցան։

1907 թ. հունվարից հետո տեղի ունեցան մի շարք աշակերտական հուզումներ, սակայն դրանք շատ թույլ էին ու չկրեցին մասսայական բնույթ։ Այսպես, օրինակ, 1907 թ. հունվարի 31-ին արական գիմնազիայի 6-րդ դասարանի աշակերտները, որպես բողոք, այրեցին դասավանդման ամբիոնը[50]։

Մարտի 7-ին ճեմարանի աշակերտները 86 հոգու ստորագրությամբ պահանջ ներկայացրին, որպեսզի վերացվեն ավարտական քննությունները և փոխվի վկայականներ տալու կարգը, բայց մանկավարժական ժողովը կտրուկ կերպով մերժեց այն[51]։ Նոյեմբերին բողոքներ եղան ճեմարանի ներքին կարգ ու կանոնի և անորակ ուսուցիչներից ազատվելու համար, բայց դրանք ևս ճնշվեցին[52] և այլն։

Հայաստանի և Անդրկովկասի հայաշատ վայրերի ուսումնական հաստատությունների 1906—1907 թթ. հեղափոխական ելույթները ցույց տվեցին, որ հակահեղափոխության ուժեղանալուց հետո էլ նրանք շարունակում են պայքար մղել դպրոցական նեխած ռեժիմի դեմ։ Սակայն այդ պայքարը գրոհ չէր, այլ կազմակերպված նահանջ, որը կատարվում էր բոլշևիկների ղեկավարությամբ։

---

48 Հայկական ՍՍՀ ՊԿԱ, ֆ. 56, ց. 3, գ. 501, թ. 16։

49 Նույն տեղում, թ. 129—133։

50 Վրացական ՍՍՀ ՊԿԱ, ֆ. 422, ց. 1, գ. 9427, թ. 21։

51 Հայկական ՍՍՀ ՊԿԱ, ֆ. 312, թղթ. 27, վավ. 182։

52 Նույն տեղում, թղթ. 60, վավ. 1, թ. 88, 89, և ֆ. 312, թ. 27, վ. 204։